# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԼՈՒՍԻՆԵ ՆՈՐԱՅՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ և ԼՈՒՍԻՆԵ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. *Անունը, ազգանունը.*

Լուսինե Աշոտի Գրիգորյան
Լուսինե Նորայրի Գրիգորյան

2. *Զբաղեցրած պաշտոնը.*

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության ուսանողների աջակցության բաժնի գլխավոր մասնագետ

3. *Գործուղման վայրը և ժամկետները.*

Ֆրանսիայի Հանրապետություն, ք. Ստրասբուրգ, հուլիսի 1-ից 6-ը, 2024 թվական

4. *Հրավիրող կողմը.*

UNIVERSITE DE STRASBOURG (UNISTRA), Ստրասբուրգի համալսարան

5. *Գործուղման նպատակը.*

Մասնակցություն՝ Եվրոպական միության «Էրազմուս+ ՀԳ2» կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում «Հայաստանում և Մոլդովայում հանուն կանաչ և կայուն զարգացման բակալավրիատի կրթական ծրագրի բարեփոխում» (RE-GRAD)» նախագծի շրջանակներում աշխատաժողովին:

6. *Քննարկված թեմաները.*

- Փորձի փոխանակում. Ստրասբուրգի և Իտալիայի Սանինո համալսարանի դասախոսների կողմից պատրաստված շնորհանդեսներ,
- Նախատեսված ծրագրերի կազմման, անցկացման պայմանների հստակեցում, կանաչ կրթության հիմնահարցերի շուրջ քննարկումներ գործընկեր համալսարանների հետ:
- Կատարված աշխատանքների քննարկման նպատակով անհատական հանդիպումներ գործընկերների հետ,
- Ընթացիկ այլ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, այցելություններ.*

Աշխատաժողովին մասնակցել են ծրագրի շահառու հանդիսացող՝ Ստրասբուրգի, Մոլդովայի, Սանինոյի համալսարանի (Իտալիա) և Ռումինիայի համալսարանի ներկայացուցիչները: Կապեր հաստատվեցին գործընկեր

համալսարանների ներկայացուցիչների հետ, քննարկվեցին ծրագրի ժամանակացույցով նախատեսված մի շարք հարցեր:

Հայ և եվրոպացի գործընկերների կողմից ներկայացվեցին աշխատանքային փաթեթները, ինչպես նաև քննարկվեցին ծրագրի ժամանակացույցով նախատեսված փաթեթների կատարման ընթացքի վերաբերյալ հարցերը:

Անդրադարձ կատարվեց բուհերի կողմից գնված և գնման համար նախատեսված սարքավորումներին, որոնք պետք է համապատասխանեն համընդհանուր եվրոպական չափանիշներին: Հստակեցվեցին նաև նախատեսված ծրագրերի բովանդակությանն առնչվող հարցերը:

Քննարկվեցին աշխատանքային հարցեր, ծրագրով նախատեսված գործողությունների և նախատեսվող այցերի հնարավոր ժամկետները:

8. *Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը*

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին ծրագրի իրականացմանն ուղղված անհրաժեշտ քայլերը, որոնք համահունչ են ծրագրի շրջանակներում բուհերի կողմից ստանձնած պարտավորություններին, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պարտադիր պայմանների պահպանմանը:

9. *Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.*

Հստակեցվեցին հաջորդ աշխատաժողովի ժամկետները, վայրը, համաձայն որի՝ հաջորդ աշխատաժողովը նախատեսվում է անցկացնել Իտալիայի Հանրապետությունում, 2024 թվականի ձմռանը:

10. *Ստորագրությունը, ամսաթիվը*

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ Լ.Գրիգորյան

10.07.2024թ.